



ՀԱՄԱՊՈՅՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՑ ԲՆԱԿԵԼԻՈՒԹԵԱՆ ՄՈԼՈՐԱԿԱՑ

(Տէս յէջ 364)



ՐՊԼԾ զի գաղափար մառնունք մոլորակաց մեծութեան ենթադրենք երկրիս մեծութիւնը 1, միւս մոլորակաց կը լինի յաջորդ թիւեր.	
Փայլածուին	0,1
Արուսեկին	0,9
Երկրիս	1,0
Հրատին	0,2
Լուսընթագին	1470,2
Երևակին	887,3
Ուրանոսին	80,0
Պիսիդոնին	84,0

Բայց դեռ աւելի պարզ բացատրելու համար, համարինք արեւու
մեծութիւնն այնպիսի գունդ մի որ ունենայ 2 ոտք կամ 0,64 հարիւ-
բորդամէդը տրամագիծ, և այս գունդուն ներկայացնէ դգում, այն ժա-
մանակ

Կորեակ կը ներկայացնէ զմեծութիւն	Փայլածուի
Փոքր ոլոռն	»
Միջակ ոլոռն	»
Գնդասեղ	»
Նարինջ	»
Միջակ խնձոր	»
Պարզ կեռաս	»
Մեծ կակ կեռաս	»
	Արուսեկի
	Երկրիս
	Հրատին
	Լուսընթագին
	Երևակին
	Ուրանոսին
	Պիսիդոնին

Վերահասու լինելով այս կերպով հեռաւորութեան և մեծութեան
արեւու և մոլորակաց, կը յաւելում որ ըստ կոպեռնիկեան դրու-
թեան, երկիրս իւր տարեկան շրջանը արեւու շուրջ կը կատարէ մանր.

Երկրորդի մէջ 28 վերստ կամ 30 քիլոմէտր. իսկ արևն՝ որ ինքնիշխան տէր է երկրիս և մոլորակաց, աստիճանաբար կը թաւալի տիեզերաց մէջ, ունենալով կեղրոն ձգողութեան Ալգիոն աստղը. անշուշտ Ալզիոն ևս անսահման տիեզերի մէջ կը թաւալի մի ահաւոր շրջանով. այլ աստեղ շուրջանակի, որ մեզ անծանօթ է.

Ի վերոյ ասացելոց գուցէ մարդս կը համոզուի՝ թէ մեր երկիրը՝ բովանդակ արարչութեան մէջ, ամենափոքր նշանակութիւն ունեցող մոլորակ մի է, ուստի եթէ բոլորովին յոշինչ դառնայ ևս, հազիւ հազ զգալի պիտի լինի բոլոր լուսաւոր մարմնոց դրութեան մէջ.

Ուրեմն երբոր մարդս ճանշցաւ իւր սխալմունքը, երբոր տեսաւ կոպեռնիկեան դրութեան մէջ թէ արեւու շուրջ կը թաւալին նաև այլ մոլորակը, որք մի և նոյն իրաւամբ կարող էին լինել կեղրոն տիեզերիս, նման մեր երկրիս. միով բանիւ, երբոր յայտնի եղաւ որ այս դրութիւնս չէ միակ յանսահման միջոցի, իսկոյն խնդիր ելաւ թէ արդեօք միայն երկրիս բնակիչք կը վայելեն տիեզերաց այս հրաշալի ներդաշնակութիւնը, միթէ չկա՞ն յայլ մոլորակս կեանք և կենդանիք, և նոյն իսկ բանականք, որք բանսեցնէին իրենց բոլոր հոգեկան ոյժեր առ ի հասու լինել անսահմանին և լուծել առաջիկայ հարցաթէ կան բնակիչք և յայլ մոլորակս թէ ոչ:

Ասուն ամենակարողութեան առաջ չկան անհնարինք. ուստի գժուարին է հաւատալ թէ Աստուծոյ արարչական կամքն և զօրութիւնն սահմանափակուէր միայն յայն՝ զորս կը տեսնեմք երկրիս վրայ. ուր մնաց որ երկիրս ամենափոքր է և չնչին առ ի բովանդակել ամէն հնարաւոր կենդանիս: Այսու համոզմամբ և հիմուելով գիտութեան արդեանց վրայ, նախնիք մեր ոչ միայն ընդունեցան թէ կայ կեանք ի մոլորակս, այլ մինչև անգամ մտածեցին կանոնաւոր և անփոփոխ կապակցութիւն մի հաստատել այն բնակչաց հետ, որք հեռու են մեզմէ աշխարհներով. ի հաստատութիւն որոյ ահաւասիկ քանի մի գէպք:

ՅԱմերիկա գտնուած է երկնաքար մի, որոյ վրայ ագուցեալ էր մետաղեայ թիթեղ մի, զոր հանելով վրայէն, երկնոքարին վրայ փորագրուած տեսնուեր են բոլորակներ, որոց դիբք ճիշդ կը համապատասխանէին մեր արևային դրութեան, եթէ նայելու լինէինք Հրատէն: իրողութիւն համարելով զայս, նախնիք մեր իրենց երսակայութեամբ հաստատուն կերպով ենթազրեցին թէ Հրատին մէջ կան աստեղաբաշխք:

Հոչակաւոր Հ. Քիրխէր քահանայն այնպէս համոզուած էր թէ կայ կեանք ի մոլորակս, որ իւր Աստեղաբաշխական հմտալից զրոց մէջ բաշմաթիւ առաջարկութիւններ կ'ընէ այս տէսակէտով:

Առաջարկուեցաւ նաև հեռագրական հաղորդակցութիւն մի հաստատել Հրատին հետ ի ձեռն երկրաչափական ձևոց գոյնզգոյն նշան.

ներով, հետևեալ պատճառաբանութեամբ. Եթէ կան մարդիկ՝ ՚ի Հրատ, անտարակոյս նոցա մէջ կը լինին և թուաբանագէտք. Եթէ կան թուաբանագէտք, ուրեմն ծանօթ պիտի լինի նոցա զիւթագու-
րեան հայեցողութիւնն, հետևաբար կ'արժէ որ երկրիս վրայ ամէն կողմն շնուրին մեծամեծ ուղանկիւններ, որով և հարցնել նոցա թէ ի՞նչ բանի հաւասար է ուղաձիգներու քառակուսեաց գումարը. իսկ նոցա կը մույց հարցընել մեզի հակուղիղներու քառակուսեաց գումարը:

Եղան մինչև մոտածոլք իսկ գրութիւն մի հաստատելու ընդ բնա-
կիչս մոլորակաց, զուգօրդական հայելեաց մէջ ամփոփուած խուրձ
խուրձ լուսոյ ճառագայթներ ուղարկելով, ըստ այնմ կարծեաց թէ՝
լուսոյ ճառագայթք պիտի տեսնուին յԱրուսեակ, ի Հրատ և ի Պիսի-
դոն իսկ: Ոմանք համարեցան նուա թէ լուսաւոր կէտեր, ողք արդէն
մերձաւոր մոլորակաց վրայ փորձուեր էին, կրնան լինել իրեւ նշան-
ներ, երկրիս վրայ ծառայելու համար փոխանակ թղթակցութեան:

Սոցա նման ենթագրութիւնք և կարծիք շատ են, զորս պէտք է
համարել մարդկային երեակայութեան զիւտք և ոչ եթէ ուսումնական
ճշմարտութիւնք:

Պակայն ինչ էր պատճառ և երբ աւելի յասպարէզ ելան այսպիսի
երեակայութեան արդիւնք: — Անմիջապէս երբ հեռադիտակ դտնուե-
ցաւ 1642 ին, յորում մարդկութիւն հետախոյզ հետաքրքրութեամբ
և անհամբերաբար սկսաւ ի խորս թափանցել առ հասարակ երկնա-
յին միջոցին, և ամենէն աւելի մեզի մերձաւորագոյն լուսաւորին՝
լուսնի:

Գալիքէսոի առաջին փորձառութիւնք. Ամերիկայի զիւտին շափ մեծ
աղաղակ հանեցին: Հազիւ թէ առաջին զժուարին քայլն եղած
էր, իսկոյն անհամբերաբար ուղեցին երկրորդ, երրորդ՝ և այլն քայ-
լեր ընել: բայց որովհետև գիտութեանց արդիւնք չի յաջողցան ըստ
փափաքանաց, և թէ ՚ի զոր սպասելով շատ տարիներ անցան, և
մարդիկ տակաւին չի կարողացան տեսնել լրաւնային քաղաքներ և
նոցա բնակիչներ, այն ժամանակ իրենց բորբոքեալ երեակայութիւնն
յառաջ գնաց, այլ ևս չսպասելով ուսումնական եզրակացութեանց,
սանձ ի բերան սլացաւ ի միջոց տիեզերիս: Որոյ արդիւնք եղան ան-
թիւ երեակայական նկարագրութիւնք ճանապարհորդութեանց լուս-
նոյ և մոլորակաց, յորս շատ վառվառն են ստորագրութիւնք մոլորա-
կային բնակչաց, զոր օրինակ և ֆայլածուի լերինք զարդարուած են
ամենագեղեցիկ պարտէզներով, ուր կ'անին ոչ միայն պարարտ և
ջրաւէտ պատռներ ի կերակուր ֆայլածուի բնակչաց, այլ և զանա-
զան կերակրեցնք: Երբոր այն տեղի բնակիչք կ'ուզեն ճաշել, բաւա-
կան է միայն սեղան գնել, և իսկոյն կ'երեւին թուշունք ծառայողք,
որք մտագրութեամբ չելով հրամաններ, կը թաշին ի լերինս և պէտք

եղած ուստելիք և կերակրեղէն առած կը բերեն նոցա ամենայն դիրութեամբ :

Այս հասարակ յերեակայական նկարագրութիւնս՝ այնչափ յառաջ գնացին, մինչև իսկ ուզեցին շափել մարդկանց հասակը. զոր օրինակ, ենթադրելով թէ մարդկանց հասակը համեմատական է մնլորակաց զանգուածոց, կը հետևցնէին թէ մարդկի ի լուսին և ուզ կամ 0.8 ասանորդամէցք բարձրութիւն պիտի ունենան. իսկ արևու բնակչաց հասակը 200 ուզք կամ 60 մէզք պիտի լինէր, և այլն :

Միեծահոչակ Քէփիէր ևս, քանի որ գեռ չէր գտած իւր անմահ օ. րէնքները, երկայն ժամանակ նոյնպիսի երեակայական ենթադրութեամբք զբաղեցաւ. ուակայն մարդկային այս երեակայութիւնը կրնան համարուիլ իբրև սանդղամատունք, որոց վրայ կարելի է ժամանակաւ ենէ մարդկային հանճար, զոր Նախախնամութիւն որոշեր է զայս խնդիր հաստատուն օրինօք լուծելու. իսկ այն ամենայն մանրավէաք, զորս ընտրեցինք 'ի նմանօրինակ վիպաց, իբրև պարզողք առաջիկայ խնդրոյս, կարելի է գնել մի մեծ շրջանակի մէջ, որպէս պատկեր մարդկային երեակայութեանց, որոյ անեզք սահմանէն դըուարին է լցո ծագել:

Արդ այս խնդիրս պէտք է լուծել ոչ ըստ մի միայն տեսութեան, այլ ըստ ամենայն մասանց. օրինակի համար. Պէտք է հետազոտել, ի մոլորակս զկենանս և զկենդանիս ըստ մեր երկրիս տեսութեան, համարելով թէ մի և նոյն է և նոցա տարրաբանական գոյութիւնն, նոցա քառակուսի հիւսուածոց կազմութիւնն, նոցա աճողութեան օրէնքն. Ենթակայ լինել վնասակար ազգեցութեանց, և այլն: Երկրորդ՝ պէտք է ընդունել թէ յայլ մոլորակս, ընդ այլ պայմանօք՝ ջերմութեան, լուսոյ, եղանակի տարրոյ, տարրոյ երկայնութեան, ցերեկի և գիշերոյ տարրերութեան, ձգողութեան զօրութեան, և այլն, կարելի է աճի և զարդանայ կեանք մի բոլորովին տարբեր, մեղի անհասկնալի, և սակայն ունենայ մերինին նման այն ամենայն հասարակ նշաններ, որով կը տարբերին կենդանին և զգացողն՝ յանգործարան աշխարհէ :

Թէ այսպիսի ենթազրութիւնք կարելի են, կը հաւաստեն յանորդիրութիւնք: Տամն և հինգ տարի առաջ ուսումնականք ժխտեցին ամենայն կարելիութիւն կենաց և կենդանեաց 'ի միջութեան և. ի խորս ծովու, ապացուցանելով թէ անհնարին է որ կենդանի արարած մի ապրի այնպիսի ճնշման տակ ովկիանոսի խորը: Սակայն վերջի տարիներուս հետոզաւութիւնք ապացուցին թէ անհիմն են բոլորովին այն հետեւութիւնք. վասն զի ի ձեռն կատարելագոյն գործեաց հանեցին 'ի խորոց ծովուն, այնպիսի փափուկ և վիթխարի արարածներ, որոց կեան ընդհակառակն անկարելի է առանց այն ահազին ճնշման: Քանի մը տարի առաջ ևս ձկնորսք ովկիանոսի խո-

րէն այնպիսի ձկունք բռնեցին, որ ծովու երեսը մէկ միմնոլորտի ճնշմամբ չի կարողացան ապրիլ։ կաշինին ճամբրութեցան, աշքեր դուրս ցըցուեցան ու չարաշար տանջանօք սատկեցան։ Այս ձկունք միայն կրնան ապրիլ ի մեծ խորութիւնս, ուր մեծ ճնշումն կայ և միանգամայն ընդարձակածաւալ ծովային անապատներ, զուրկ ՚ի ծովային բուսոց, և որով մեծ կոփւ պիտի ունենան ձկունք իրենց կեանքը պաշտպանելու համար։

Կարծեմ թէ բաւական են յառաջ բերած դէպքերս համոզելու համար թէ կարելի է գործարանաւոր մարմնոց գոյութիւնն յայլ մոլորակս, ոչ միայն ըստ մեր մոլորակին պայմանաց, այլ և ըստ տարբեր պայմանաց, զորս ի վեր անդր յիշեցինք։

Յաջորդ յօդուածով կը տեսնենք աստեղաբաշխութեան և աստեղաբնագիտութեան պատասխանը առաջիկայ խնդրոյս նկատմամբ։

Շարունակելի

Մարարոնի դիցազանց գերեզմանն։ — Գեղինի լրագիրներէն մին կ'աւետէ մի հնախօսական հետաքրքրական գիւտ, որ տեղի ունեցել է այս մօտերս Մարաթոնի մօտ։ Մարաթոնեան դաշտին մէջ կայ մի րլուր 9 մէդր բարձրութեամբ, որ հին ժամանակէ ի վեր կը համարուէր Մարաթոնեան պատերազմի մէջ անկեալ 192 Աթենացւոց գերեզմանը։ — Սակայն այս գիւտս ըստ բաւականի տարակուսի մէջ կը ձգէր զմարդս, մոտածելով՝ որ Ծլէյման ոյինչ գատաւ ոյն բրլրան վրայ։ — Բայց այս ատոյդ է որ վերջի ժամանակներս Յունաց տէրութիւնն, զանազան յաջող պեղմունք լնելով յԱտափիէ, կարզը հասաւ նաև Մարաթոնեան բլրան, զոր մեծաւ խնամքով հետազօտելով՝ գտաւ Մարաթոնեան պատերազմի քաջաց գերեզմանը։ Գետին այն կողմերը բարձրացած է 'ի հին ժամանակէ 3 մէդրի շափ, ուստի բլուրն ի սկզբան ունեցել է զրեթէ 12 մէդր բարձրութիւն, և ճիշդ այս խորութեամբ՝ բլրան գագաթէն սկսեալ, և գրեթէ 3 մէդր խորութեամբ՝ արդի գետնի երեսէն, զոնուեցաւ քարէ յատակի նման կարգ մի, որ ծածկուած էր մոխրով 2 էն մինչեւ 8 հարիւրորդամէդր թանձրութեամբ։ Այս մոխրոյն մէջ կան գեռ ևս փայտի մնացորդք, սաստիկ քայլայեալ մարդկային ոսկերք և անթիւ կաւէ միջակ անօթներ։ Այս անօթներս՝ որք ծածկեալ են սև գիմօք վազող մարդկանց նկարներով, անտարակոյս կը վերաբերին 490 թուականին նախ քան զբրիստոս, որով գերեզմանն ես՝ որ կը բռվանդակէ բազմաթիւ քաջ երիտասարդաց մոխրիներ, կապակցութիւն ունի Մարաթոնեան պատերազմին։ Այս գիւտս մեծ օգուտ ունի ոչ միայն ի հաստատութիւն պատմութեան Մարաթոնեան պատերազմի, այլ և նկարչութեան։